ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

Էլինա Սիմոնյան, ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Վիեննա (Ավստրիա), 2023 թվականի սեպտեմբերի 18-ից 29-ը ներառյալ

3. **Հրավիրող կողմը.**

Արժույթի միջազգային հիմնադրամ

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Դասընթացին մասնակցելու անհրաժեշտությունը պայմանավորված էր Ֆինանսների նախարարության Ֆիսկալ ռիսկերի վարչությանն առնչվող գործառույթների ապահովման նպատակով մասնագիտական կարողությունների կատարելագործմամբ, ծրագրում ներկայացվելիք միջազգային լավագույն փորձի օգտագործմամբ, ինչպես նաև ֆինանսական հատվածից բխող ֆիսկալ ռիսկերի ուսումնասիրության և կառավարման վերաբերյալ ավելի լայն գիտելիքների և հմտությունների ձևավորմամբ:

Ի թիվս այլ գործառույթների՝ Էլինա Սիմոնյանի գործառույթների շարքում գտնվում են ֆինանսական հատվածի ընկերություններից բխող ֆիսկալ ռիսկերի ուսումնասիրությունը, ինչպես նաև ֆինանսական հատվածի ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների ուսումնասիրությունը:

5. **Քննարկված թեմաները.**
   - Ֆինանսական հատվածի քաղաքականության ձևավորում
   - Ֆինանսական ցիկլեր
   - Ֆինանսական ռիսկ և համակարգային ռիսկ
   - Ֆինանսական ցիկլերի նույնականացում և կապիտալի հակացիկլային բուֆերների չափորոշում
   - Ֆինանսական ռիսկերը և վերահսկողության քաղաքականությունը

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
   Բացի 5-րդ կետով ներկայացված թեմաների շրջանակներում քննարկումներին մասնակցությունից և փորձի փոխանակումից, ՀՀ Ֆինանսների նախարարության ներկայացուցիչը մասնակցել է նաև բոլոր թեմաների շուրջ կազմակերպված գործնական առաջադրանքներին, ինչպես նաև դասընթացի ավարտին պատրաստել և ներկայացրել է շնորհանդես՝ առաջադրված թեմաների շրջանակում:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Գործման ընթացքում ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ, որոնք կնպաստեն թեմայի առնչությամբ առաջիկայում ՀՀ ֆինանսների նախարարությունում նախատեսվող աշխատանքների առավել արդյունավետ իրականացմանը: Մասնավորապես՝ առաջիկա 3 ամիսների ընթացքում հասանելի կլինեն դասընթացին առնչվող բոլոր նյութերն ու առաջադրանքները: Արժույթի միջազգային հիմնադրամի ներկայացուցիչները ևս իրենց պատրաստակամությունն են հայտնել աջակցել նշված թեմաների շուրջ իրականացվող գործառույթների իրականացմանը:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Ձեռք բերված համագործակցությունները կնպաստեն Ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության լիազորությունների շրջանակում՝ ֆինանսական հատվածից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատման մեխանիզմների կատարելագործմանը և հետազոտական արդյունքների բարելմանը: Առաջիկա համատեղ աշխատանքի արդյունքում հնարավոր առաջարկությունները ի լրումն կներկայացվեն:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը.**

Էլինա Սիմոնյան

03.10.2023թ.